Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Մեծ Պարնու ակադեմիկոս Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (3 դասաժամ),ինֆորմատիկա (8 դասաժամ),երգ երաժշտություն (2 դասաժամ),Քիմիա (5 դասաժամ),Զինղեկ (1 դրույք) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեբերի 16-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ,կիրակի և այլ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 1-ին՝ **ժամը 14:00 -ին**, ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակ.Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում: Հասցեն՝Լոռու մարզ, գ. Մեծ Պարնի 1-ին փողոց 76 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել (077) 06-41-91 հեռախոսահամարով: